

գլխացիւն. քարգմ. Որ. Ծ. Տ.-Ն. (Հրատ. Բճկ. N.º 154) — Թիֆլիս, տպ. Կ. Մարտ. 1899, 80, 42 էջ:

Զուարճալի պատմութիւն մը որ տեղի ունեցեր է Գերմանիայի Հաբսպուրկի կողմը, Գրինովիզէր անունով փոքրիկ քաղաքին մէջ: Նպատակն է կրթել երիտասարդական Հա. սակը՝ չնմանելու կապիկ նման ամէն լաւ տես. նուաժ անձի կամ իրի: Լեզուն ըստ բաւա. կանին մաքուր: Հ. Ա. Դ.



ՍՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ԼԻԿՈՆԻ

ԱՇԱԿԵՐՏԱՅ

ՊԱՍՏԱՍՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՄՆ

ՍԱՅԻՍԻ 25Ը Մուրատ—Ռաֆայէլեան Լիկեոնի յաղթանակի Հանդիսաւոր օրերէն մին էր. անձիշդ չէ ըսելն՝ թէ վարժարանի մը յաղթանակի օրն է՝ աշակերտաց փայլուն և յաճոյակ կերպով ուսմանը աւարտելով պսակներու և վկայականաց արժանանալն: Նոյն աւուր յաղթանակն ի՞թէ գերազանց բան զնախորդա Համարինք, անտարակոյս պիտի չսխալինք: Յիշատակի օր մ'էր այն օրն յորում վկայականներու կ'արժանանային աշակերտներ, որոց նման քաշեր՝ ըստ վկա. յովման օտարազգի տէրութեան բարձրա. զոյն պրօֆէսորներու չեն տեսնուած: Որչափ այս բացատրութիւնը լսողիս և ընթերցողաց չափազանցութեան գաղափարս ի՞նչ կու տայ, սակայն Պրօֆէսորներն զայն իբրև անուրա. նայի ճշմարտութիւն կ'ընդունին, և այն ա. շակերտներէն կ'ուզեն ցրուել իրենց թագա. տրական վարժարաններու մէջ, յօրինակ մտքի կարողութեան և յարատեակ տոկոսն աշխատութեան:

Նոյն օրն էր յորում ակն յայտնի կը տեսնուէր Հոյակաւոր կրթական Հաստա. տութեանս նորակազմ ծրագրի՝ յուսալի ար. զեանց իրագործումը: Ի ներկայութեան

Միաբանութեանս վեհ պետին Գեր. Իգնա. տիոս Կիւրեղեանի, Նահանգապետ Պարոն Վինսպիրի, փոխ-քաղաքապետ ֆելդշեր. նիի, Ռուսական Հիւպատի, Ս. Ղազարու ծերունի և երիտասարդ յարգելի Հարց և այլ պատուաւոր տեղացի ազնուաշուք ան. ձանց կը կատարուէր վարժարանիս Հանդէ. սը, որ սկսաւ աշակերտաց երդօնն առաջ. նորութեամբ Լիէո Մարքօ Ֆոսքարիի ա. նուանի երաժշտապետաց. մէջ ընդ մէջ եր. գերու՝ յաշակերտաց ոմանք կ'արտասանէին Հայ. իտալ. գաղ. անգլ. գերմ. Թրքերէն բանախօսութիւնք, իբր թարգման երախտա. զէտ սրտի առ Միխիթար, իրենց դրուատելի բարեբարներն և առ մեծարգոյ Տեսուչն: Էմիլիօ Դեզա իտալացի լեզուագէտ բեզուն գրիչը Հանդիսականաց ուղարկութիւնը խեց Հետազայ ճառողն:

Այս դահլիճիս մէջ նուրբ և երազ ճառազայթ. մեր իրարու կը հանդիպին թէ՛ առաւօտին և թէ՛ երեկոյեան, արեւելքէն և արեւմուտքէն, այնպիսի մշտնջ. որ կը շողողան այսպ առջեւ և կը զուարճացնեն, որ կը շերմացնեն և կը մխկիւրսն արտեր: Խորհրդաւոր մշտն մ'է մասն արեւգակն, այն աստուածմ՝ որ եթէ մէկ կող. մամէ կը ծագի՝ իրեն մատակարար քաղաքա. կիրթ մտածմամբ հին ցեղերու մէջ, միւս կող. մամէ իւր մարը մտնելու ժամանակ կը կենդա. նացնէ ուրիշ գործեր և ուրիշ ազգեր, որք հե. տամուտ են հմաւանդ ժառանգութիւնն անելի եւս փոխացնելու և արգասաւել տգործանելու: Աչքի սցնպէս կ'երեւնայ՝ որ այդ աստուածութիւնն՝ երկար գիշերուամբ մը մէջ ծուլութեամբ կը հանգ. չի. բայց հոպս ուրեմ կը ծագի և ցոյց կու տայ իւր մակնիկն զօրութիւնն և գեղեցկութիւնը: — Քաղաքակրթութեան տարեգրող մասին այսպի. սի փոխ ընդ փոխ յեղաշրջմանց վրայօք՝ անելի եւս գլուարթութեամբ կը խորհին միտք՝ ձեր մէջ գտնուած ժամանակ, ո՞վ պատամիր, որք ա. րեւելքէն եկած՝ ո՞վ պարեմն պիտի վերադառ. նայ: Ձեր ուժերը զօրացան այն գիտութիւնն. ըսով՝ զորս այստեղ ստացաք. քանի որ ա. րեւմտական տոհմերը միջամիջ ելած՝ կ'ուզեն տո. կուսօք վնարել հեռաւոր թրուներու՝ ինչ որ մոցա պապերէն ստացել են: Անմոռաց յիշեցէք այն երկիրը՝ որ ասովնական եղաւ ձեզի. արդէն միտք մէջ տեղի ունեցած քաջարի մարդկանց գործերը, իմաստասիրաց գիտութիւնը, ըսմաս. տեղումներու խանդը՝ որք մերկայացուած են մար. մարդիմներու, մկարմներու, և գրքերու վրայ՝ յայտնի կը խօսին առ. ձեզ պատմութեանց էջն:

րու մէջ, և դուք սիրով պիտի յիշատակէք զանոնք: Իտալիոյ մենք մասն կը կազմենք, զատաւոր չենք. օտար ազգաց կը պատկանի խնայելի և արդարադատ ճշդութեամբ քննադատելը, որովհետեւ ազնուական և երակստագէտ սրտեր կիրայօժար պիտի մեկնմարանեն լսածնիմ և տեսածնիմ: Ձեր տուններուն մէջ, ձեր ընտանեկան շրջանին գորովալիք խմբին մէջ՝ կրկնեցէք իմը որ ժամանակէ մ'ի վեր ձեր ականջները լսելու են, պատմեցէք թէ ինչպէս այս մեր Պննեսիկո ուրախ սրտով միշտ վկայ համդիւսացած է բազմաթիւ առարկիւթեանց, որք իմաստութեամբ և խորհմութեամբ ի գործ էր դրուիմ Միլիթարեանց հաստատութիւններուն մէջ: Հարուստ մարդկանց սքանչելի ատաստածնութիւնն՝ շատ սակաւ արդիւնք պիտի պտուղբերէր՝ առանց այն յարատեւ մտաւորական զօրութեան, որ զայն գործածեն նուիրական հաստատարութեամբ՝ յօգուտ այնքան հապազդի որդւոց սերունդներու, ազնուութիւթ որդւոց որք կ'օրհնեն ձեր ոսուցչաց ամուսնը: Ամուսականներու ճգնաւորներ չեն՝ որք կը քաշուին մեկուսական՝ փորձողէն ահաբեկած. անդեղեւուն և պարզախորհ հոգիներ են՝ որք կենդանի կեանքի մէջ կ'ապրին. կը մայիմ դէպ ինքիմն՝ ոչ ծայրայեղ բարեխաշտութեամբ. կը մայիմ մասն դէպ յերկիր՝ բարեգործելու եռանդուն փափաքմամբ. կ'առաջնորդեն դէպ ի գիտութիւն՝ բանիւ և օրինակաւ, և դէպ ի համեստ քարս՝ խօսքով և գործով: Օրինակ առէք զիրենք ձեզի, ով պատամիրք, հայեմիկը սիրելու և հայրենեաց ծառայելու գործիմ մէջ: Այն պատմաուսուս ձեր զարմանաց առջեւ չեն դնիր քաշարի մատմեղազրաց վսեմական անուններ, որ դուք կուսպաշտներու մնամ վանոնք խնկոց ծուկերով հարբեցնէք, այլ որպէս զի նկատէք զիրենք իբրեւ սիրալոյստ աւանդակահներ, որք սեծասեծ մարդկանց մտածումքները կը խոցեն: Հեռի ունայմասիրութեմ, փառաբանողի համբաւէ, կեղծուպատիր մեծգութիւններ, են՝ ինչպէս որ եղած են և պիտի լինին. և թէ մտերիմ և հին բարեկամ մը կ'ակամածէ որ չլլայ թէ յայտնի գովեստներով կենդանի եղող ամծանց համաստուգելով վիրաւորէ իւր զգացածը խօսելով, կրնայ զմէջ սակայն, այս ազնուամիտ տեսաց հետ, եռանդուն փափաք յայտնել որ ի զիւր արժանաւորիմ այս պարմելի վանքին մերքին կեանքն, նկարագրելով նոցա թէ՛ պարզական կենցաղաւորութիւնն և թէ՛ ամէմ մէկուս ժրաշուն աշխատութիւններն՝ ըստ զամազան գլխոյ, որպէս զի պայծառափայլ յիշատակները տօնախմբուիմ ազգին մէջ, և տկուր օրերը սպոյ նուիրելիմ: Վստի զի դուք, սգաւորք և որդիք սգաւորաց, որ չէք համախմբուած հայրենական թերափի մը՝ մի սիակ սրբանուէր դոշոյն մերքեւ, և չէք կրնար հօգ-

րաց վատարի անգործութեամ մը հանդէպ՝ ձեռք տալ և մտք օժանդակել արդարութեան և խաղաղութեան վիճակի մը, դուք ձեզի բաժնի ունիք ձեր առջեւ փափաքմամբ, սիրոյ, յուսոյ և լեզուի միութիւնն, որ երկրիս վրայ երկարացող տեւող միութիւնն է:

Շատ դարեր անցնել են այն ժամանակէն ի վեր՝ որում կ'երգէր ձեր ազգայիններն մէկը, ձեր բամբաստեղծիք մէջ գերազանց կերպով Շնորհալիմ:

(Տես յոդքն Եփեսոս... տողք 256-264) (?)

.....

Յոյժ հակաւաւելն տեսանի

Վանգի նըստիս որք և այրի:

Այո՛, աշխարհեալ կը ճըստի, բայց իւր չորս կողմը կը բլորեն արխախտ որդիներն, արդարեւ սպոյ մէջ, բայց ոչ զուրկ ի յուսոյ: — Թող վերականգնի շուտով ուրիշ մըր բամբաստեղծ մ'ալ ձեր ամէն, որ եղէ իւր մախկնմ գահին վրայ վերաբազմիլը:

Հանդէսը կը փակէր Հ. Աթանաս Վ. Տիւրքեսանի հետեւեալ ձառը՝ զոր խօսեցաւ ի տալիւն լեզուով, և զոր թարգմանելով կը գնեն հոս, զեղշելով ինչ ինչ մասեր:

Մեծապատիւ Տեսաք,

Բարի գործողին և դէպ ի բարին առաջնորդողին՝ մին զօրապիղծ են զովեստ տուողին բարեխորտ և անկեղծ խօսքերը. կարծես զիրար ուղղող երեք ձեռք և մէկզմէկ զօրացնող երեք խելք լինին: Հասարակաց կրթութեան ծանր և փերկաւտ գործին մէջ՝ երբ ուսանողաց ջանասիրութեան հետ միաբանիմ սիրալիք խնամք ուսուցչաց, թէ՛ առաջիններն և թէ՛ վերջիններն՝ ոչ թէ կը անափառիմ բարի ամծանց ծափահարութիւններն, այլ զամոնք իրենց ազգու օգնական կը գտնեն: Այս կերպով մէկ կողմէն հանդիսականաց դերը կը բարձրանայ՝ դատաւորի պաշտօն կատարելով, և միւս կողմէն ալ համարապէս տրուած զովեստներն՝ պատամի սրտերու մէջ պատուոյ ազնիւ փափաքներ կը ծնուցանեն և սնուցանեն: Ճարտակող մախանծը կը թմրեցնէ, միջոցեւ ազնիւ մրցութիւնն աւելի եւս ոյժ կ'ազդէ: Ճարտարաբան մուսայից լեզուով խօսող Հնդդոտի ըմտայուած ծափաշայմ դրուատիքն՝ Թուրկիտեան եռանդուն մտաց սլաքներուն թնւելը կը դառնան, ինչպէս ուրդիներցւոյն (Իսափայէի) հրաշալի պատկերաց համար տրուած զովեստներն՝ Կորէշիդի շրթանց վրայ կը թըրթուացնեն խօսք մը՝ դուրս քաշելով զայն մորա-